


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ԼՈՒՍՊՈՂԿՈՄԱՏ - ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ

ԳԻՏԱ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

այ

ՊՐՈՖ. ԴՈԿՏՈՐ ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆ

**ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ-
ՆԵՐՈՒՄ**



491.99-5

2-47

991-99-5

1005-10

2-97

19 JUN 2013

Տարբական գպրոցում քերականության ուսուցումն սկսվում ե Յ-րդ դասարամնից, սակայն քերականական նախապատրաստող հասկացությունները տրվում են 1-ին և 2-րդ դասարաններում։ Այդ դասարաններում աշակերտները վարժվում են կանոնավոր նախադասություններ կառուցելուն, հմտանում են յենթակայի համար տալ ո՞վ կամ ի՞նչ հարցը, իսկ ստորոգյալի համար տալ ի՞նչ ե, ի՞նչ ե անում, ի՞նչ ե լինում և նման հարցեր։

Այդ դասարաններում, սակայն, աշակերտը տերմինավորված կազմակարգությամբ քերականական կատեգորիաների մասին; Նախադասություն բառն աշակերտները գործածում են, նրանք նաև հասկանում են, թե ինչ ե նախադասությունը։ միայն նրանց ըմբռնումը շունի վորոշակելություն, վոր ստեղծվում ե այն ժամանակ, յերբ քերականական հասկացության սահմանումն է յուրացվում։

Այդ պատճառով ել քերականական սահմանումները շատ անհրաժեշտ են, նրանք հասկացություններն ավելի սահմանավորում են, ամբողջականացնում և պարզ ու վորոշակի դարձնում։

Քերականության ուսուցումը Յ-րդ դասարանում սկսվում ե նախադասության ուսուցումով։ Այդ աշխատանքը և, ընդհանրապես, քերականական ուսուցման աշխատանքը պետք ե զուգակցել բանավոր խոսքի, գրավորի և կարդալու աշխատանքներին։

Յերրորդ դասարանի ծրագիրն ու դասագիրքը կազմելիս այդ վոր միայն նկատի յե առնված, այլ ամբողջ կուրսի հիմքումն ե դրված։

Լեզվի ուսուցման այդ տարբեր բաժինների կապը Յ-րդ դասարանի քերականության և ուղղագրության դասագրքում¹⁾ նկատի

1) Սյու դեպքում ե հետո, յերբ «Յ-րդ դասարանի քերականության դասգիրք» կապակցությունն ենք գործածում, նկատի ունենք Ար. Հարիբյանի և Ս. Դադարյանի կազմած «Հայոց լեզու, քերականություն և ուղղագրություն, դասագիրք» յերրորդ դասարանի համար» Ցեղեգան, 1940 թ.

յի առնված նրանով, վոր վող քերականության ուսուցումը տրված
ե հետևողական իլլուստրատիվ մեթոդով:

Քերականական յուրաքանչյուր կանոնի ուսուցմանը նախոր-
դում ե կամ հաջորդում ե իլլուստրացիայի յենթարկած վորելին
տեխնիկա:

Ամեն մի նկար հանդիսանում է այն տեխնիկի իլլուստրացիան,
վորը տրվում է քերականական վարժությունների համար: Ուստի
յերեխան վո՞չ միայն հոդվածի բովանդակությունը հիշելով, այլ նաև
այդ բովանդակությունը նկարի մեջ տեսնելով՝ հեշտությամբ կկա-
րողանա քերականական վարժությունը կատարել, կոնկրետացնելով
այն խնդիրները, վոր տրվում են նրան լուծելու՝ քերականության
տվյալ կանոնի շուրջը:

Նկատված ե, վոր մեր մի շարք դպրոցներում դասագրքի ոգ-
տագործումը բավարար չափով չի կատարվում, ոգտագործում են
միայն սահմանումները, շատ քիչ դեպքերում նաև վարժություն-
ները, իսկ նկարները մնում են իբրեւ մի անոգտագործելի բաժին:
Մինչեռ յերեխայի համար դասագրքի ամենահետաքրքրական բա-
ժինը նկարներն են: Նկարների միջոցով աշակերտը ծանոթանում է
տեխնիկի բովանդակությանը, մարմնավորում է այդ բովանդակու-
թյունը և կոնկրետ հասկացություն ստանում քերականական վար-
ժության խնդրի մասին:

Դասագրքի նկարները բանավոր խոնքը մշակելու հնարա-
վորություն են ստեղծում և առիթ դառնում կապելու բանավոր
խոսքը քերականության հետ: Վարժության տեխնիկ կարդալու ա-
ռիթներ ե ստեղծում և հարմարություն տալիս կապելու կարդալը
քերականության ուսուցման հետ: Վարժությունների տեխնիկը նաև
դասվոր աշխատանքների նյութեր են, վոր ամեն դեպքում քերակա-
նության ուսուցումը կապում են կամ ամրացնում գրավոր աշխա-
տանքով:

Վարժությունների առաջադրանքները վորոշում են քերականա-
կան գրավոր վարժությունների տեսակը, հաջորդականությունը, ու-
սուցման պրիորները և հիշողության մեջ ամրացնելու միջոցները:

Վարժության պատվերներից կարելի յե վորոշել, թե գրավո՞ր
պետք ե կատարել վարժությունը, թե՛ բանավո՞ր:

Որինակ՝ վարժություն 62-րդում ասված ե.

«Արտագրեցե՞ք և դրեք բաց թողնված շակերտներն ու միջա-
կետերը»:

Այդ պատվերն ինքնին ասում ե, վոր վարժությունը պետք ե

կատարել գրավոր և վոր վարժության բնույթը նպատակային ար-
տագրությունն ե: Հաջորդ վարժությունը պահանջում ե:

«Գտեք, թե ինչին են փոխարինում տողասկզբի գծերը»:

Այդ նշանակում ե, թե վարժությունը պետք ե կատարել բա-
նավոր: Դրա համար նախ պետք ե կարդալ ամբողջ տեխնի-
կավագանքել, վոր աշակերտները վորոշեն, թե առղասկզբի
գիծն ինչին ե փոխարինում (պատասխան՝ չակերտներին): Այս-
պիսով ենրականության և ուրագրության դասագիրքը և՛ բանա-
վոր, և՛ գրավոր, և՛ կարդալու, և՛ ենրականության ուսուցման դա-
սագիրքը ե:

Դասագիրքը խելահաս կերպով ոգտագործելիս լեզվի ուսուց-
ման այդ բոլոր ԲԱԺԻՆՆԵՐԸ կապվում են միմյանց հետ: Քերա-
կանության ուսուցման հիմնական հարցը, ընդհանրապես՝ նախա-
դասության ուսուցումն ե, վորը տրվում է Յ-րդ դասարանում:

Նախադասության ուսուցման հիմնական նպատակը պետք ե
լինի գիտակցել տալ աշակերտին, վոր նախադասությունը ցույց ե
տալիս թե մի առարկա մի բան անում կամ լինում ե: Այդ հաս-
կացությունը հոգեբանության մեջ կոչվում է միտք, ուստի յերբ
ասում ենք, թե միտքն արտահայտված բառերով կոչվում ե նա-
խադասություն, դրանով ուզում ենք ասել նույնը, այսինքն թե
նախադասությունը ցույց ե տալիս թե մի առարկա մի բան ե անում
կամ՝ լինում: Նախադասությունը քերականական հասկացություն
ե, լեզվական կատեգորիա, իսկ միտքը հոգեբանական հասկացու-
թյունն ե, գիտակցության կատեգորիա: Յեվ քանի վոր գիտակցու-
թյունն ու լեզուն միասնական են, ըստ վորում գիտակցությունը
բովանդակությունն ե, լեզուն ձեվը, և այդ լեզում առանց գիտակ-
ցության անիմաստ ե, ուստի նախադասության ըմբռնումը կարող
ե իմաստավորվել միայն գիտակցության կատեգորիայի միտք հաս-
կացության ըմբռնումով:

Բայց քերականության ուսուցման մեջ, հենց միտք հասկա-
ցությունն ե, վոր մնում է աշակերտի համար միշտ անբացատրե-
լի: Ընդունված սահմանումը թե՝ նախադասություն կոչվում ե բա-
ռերով արտահայտված միտքը՝ ուսուցվում է այսպես:

Հարց.— Ի՞նչ ե նախադասությունը:

Պատմախան.— Բառերով արտահայտված միտքը կոչվում է
նախադասություն: Ուսուցման այդ մեթոդն այստեղ հենց կանգ
ե առնում ու անվերջ կրկնել տալիս. միտքն արտահայտված բա-

ուերզ կոչվում ե նախադասություն այնքան, վոր աշակերտներն
անգիր են անում: Բայց բնական ձեւով աշակերտների մեջ կարող
ե առաջ գալ նաև հաջորդ հպացը:

— Բայց ի՞նչ ե միտքը:

Այդ հարցին պատասխան չկա, դրա վրայով անցնում են և
միտք բառն աշակերտի համար մնում ե միշտ անբացատրելի և
մշտական առեղծված: Ուրեմն ուսուցվում ե միայն ձեզ, առանց
բացատրելու բովանդակությունը: Տարիներ շարունակ սովորելով՝
աշակերտները կուհում են միտքը բառի իմաստը, բայց այդ ի-
մաստի մեջ շարունակում ե մնալ անորոշությունը:

Նախադասության ուսուցման հաջողությունը սակայն հենց
միտք բառը բացատրելու մեջ ե, այսինքն նախադասության բո-
վանդակությունը բացատրելու մեջ, ուստի, մեր կարծիքով, նախա-
դասության ուսուցումը պետք ե սկսել դրանից՝ այսինքն՝ պետք
ե նախ աշակերտին գիտակցել տալ, թե ի՞նչ ե միտքը, ի՞նչպես
ե առաջանում այն, ապա միայն ասել, վոր այդ միտքը բառերով
արտահայտելիս՝ ստացվում ե նախադասություն:

Այդ նպատակի համար կարող ե ծառայել քերականության և
ողղագրության դասագրքի առաջին նկարն ու տեխսար:

Ուսուցումը կատարվում ե հետեւյալ կերպ.

Ուսուցիչը բաց ե անել տալիս բոլորի գրքերը, առաջարկում
դիտել այդ նկարը և ասել, թե ի՞նչ ե նկարված:

Աշակերտներից յուրաքանչյուրն ասում ե իր առաջին տպավո-
րությունը, բայց այդ տպավորությունները կանոնավոր հունի մեջ
դնելու համար, ուսուցիչը դիմում ե հարց ու պատասխանի
մեթոդին:

Ուսուցիչ.— Ո՞վ ե պառկած:

Աշակերտ.— Մի տղա յե պառկած:

Ուսուցիչ.— Ի՞նչ ե յերեվում լուսամուտից:

Աշակերտ.— Լուսամուտից յերեվում ե մի ծառ, արեվը, ծառի
վրա մի ծիտիկ:

Ուսուցիչ.— Որվա վո՞ր ժամանակն ե:

Աշակերտ.— Առավոտ ե, արեվը դուրս ե յեկել:

Ուսուցիչ.— Վորտե՞ղ են ընկել արեվի շողերը:

Աշակերտ.— Արեվի շողերն ընկել են սենյակը, քնած տղայի
վրա:

Ուսուցիչ.— Միտիկը ի՞նչ ե անում ծառի վրա:

Աշակերտ.— Միտիկը յերգում ե, ծվծվում ե:

Ուսուցիչ.— Խսկ տղան արթնացել ե:

Աշակերտ.— Վոլ, տղան քնած ե:

Ուսուցիչ.— Տղան ծույլ ե, թե զանասեր:

Աշակերտ.— Տղան ծույլ ե, վորովհետեւ արեվը դուրս ե յե-
կել, խսկ նա քնած ե:

Ուսուցիչ.— Ել ինչից ե յերեվում, վոր տղան ծույլ ե:

Աշակերտ.— Տղան ծույլ ե, վորովհետեւ կոշիկներն ու գու-
պաները անկարգ գցել ե հատակին:

Ուսուցիչ.— Այժմ տեսնենք, թե ի՞նչ ե գրված նկարի տակ:

Ուսուցիչը պատվիրում ե աշակերտներից մեկին կարգավ:

«Արեգակը դուրս ե յեկել պսպղալով:

Շողերը հերդից ներս ե ընկել շողշողալով:

Միտքը ծառին կշկչում ե ծլվալով:

Շույլ տղայի քոմն ե տարել խոմփալով»:

Ուսուցիչն առաջարկում ե մի աշակերտի՝

Կարդա առաջին տողը:

Աշակերտը կարդում ե.

«Արեգակը դուրս ե յեկել պսպղալով»:

Ուսուցիչ.— Ի՞նչ ե ասվում այդ տողով:

Աշակերտ.— Այս տողով ասվում ե, թե արեգակը դուրս ե
յեկել:

Ուսուցիչ.— Ի՞նչ առարկայի անուն ե տրված այս տողում:

Աշակերտ.— Արեգակի:

Ուսուցիչ.— Արեգակի ի՞նչ գործողության մասին ե ասվում:

Աշակերտ.— Դուրս գալու մասին:

Ուսուցիչ.— Ուրեմն այս տողում խոսվում ե մի առարկայի՝
արեգակի և նրա գործողության՝ այսինքն դուրս գալու մասին:

Ուսուցիչը դիմում ե մի այլ աշակերտի և առաջարկում կար-
գավ յերկրորդ տողը. աշակերտը կարդում ե.

«Շողերը հերդից ներս ե ընկել շողշողալով»:

Ուսուցիչ.— Ի՞նչ ե ասվում այս տողի մեջ:

Աշակերտ.— Այս տողի մեջ ասվում ե, թե շողերը ներս ե ընկել:

Ուսուցիչ.— Ի՞նչ առարկա յե այստեղ հիշատակվում:

Աշակերտ.— Շողերը:

Ուսուցիչ.— Ի՞նչ գործողություն ե կատարել շողերը:

Աշակերտ.— Ներս ե ընկել:

Ուսուցիչ.— Ուրեմն այս տողում ևս խոսվում ե մի առարկայի՝

շողիկ և նրա գործողության մասին (ներս ե ընկել):

Այժմ դու կարդա հաջորդ տողը, դիմում ե ուսուցիչը մի յերբորդ աշակերտի:

Աշակերտը կարդում ե.

«Ծիտը ծառին կշկում ե ծվծվալով»:

Ուսուցիչ.— Ի՞նչ ե ասվում այս տողով:

Աշակերտ.— Այս տողում ասվում ե, թե ծիտը ծառին կշկում ե»:

Ուսուցիչ.— Ի՞նչ առարկա յն գործողությունը կատարում:

Աշակերտ.— Ծիտն ի՞նչ գործողություն ե կատարում:

Աշակերտ.— Ծիտիկը կշկում ե:

Ուսուցիչ.— Որեմն այս տողն ել ցույց ե տալիս, թե մի առարկա (ծիտը) մի գործողություն ե կատարում (կշկում ե):

Այսպիսով մենք տեսանք, վոր ամեն մի տողը ցույց ե տալիս, թե մի առարկա մի բան ե անում: Յերբ հասկանում ենք, վոր մի առարկա մի բան ե անում, մի գործողություն ե կատարում, մեր պիսում ստացվում ե մի միտք ինչպես, որինակ, արեգակը դուրս է յեկել, շողիք ներս ե ընկել, ծիտը կշկում ե և այլն:

Այս միտքն արտահայտված բառերով, կոշկում ե նախադասություն:

Այդպիսով ի՞նչ ե նախադասությունը:

Աշակերտ.— Միտքն արտահայտված բառերով կոշկում ե նախադասություն:

Ուսուցիչ.— Ավելի լավ ե ասել. Բառերով արտահայտված միտքը կոշկում ե նախադասություն:

Աշակերտը կրկնում ե.

Թիառնուք.— Այժմ ո՞վ կամի նախադասություն, կամ մի: միտքը կարտահայտի բառերով:

Ցերե աշակերտները չեն հասկանում, ուսուցիչը պետք ե ասի:

— Ասացեք մի նախադասություն, այսինքն մի առարկա մի բան ե անում կամ լինում, որինակ՝ Հասմիկը կարդում ե:

Աշակերտներ.— Պետքի գրում ե: — Կարոն լաղում ե: — Չուզիկը խոսում ե: — Նորիկը շաբություն ե անու:

Ուսուցիչ.— Ճիշտ ե, այդ բոլորը նախադասություն են, այսինքն՝ բառերով արտահայտված միտք են:

Վորովիտեւ բառերով արտահայտված ձեր ամեն մի միտքը լրիվ

է, ուրիշ ել բան չեք ասում հետո, ուստի կասենք ամփոփ միտք, ուրեմն՝ կանոնը վերջնականապես կլինի հետեւյալը: «Թաներով արտահայտված ամեն մի ամփոփ միտք կոշկում ե նախադասություն»:

Այնուհետեւ ուսուցիչը կրկնել ե տալիս մի բանի աշակերտների և առաջարկում կանոնը ասելուց հետո, անմիջապես որինակ բերել, աշխատելով, վոր աշակերտների որինակները լինեն ընդարձակ նախադասություններ: Դրանից հետո պետք ե բաց անել նաև գործերը և կարդալ տալ յերեսը առաջին բառից սկսած, ուշադրություն հրավիրելով վերնագրի վրա, բացատրելով այն՝ իրենիվ վերնագիր, բացատրելով, վոր այդ բառից հետո գրվում ե պատվերը, վորը պետք ե կատարել:

Օրինակ՝ գրված ե.

«Վարժություն 1: Կարդացե՛ք հետեւյալ նախադասությունները»:

Այդ պատվերն ե, և պետք ե այդ պատվերը կատարել, այսինքն պետք ե կարդալ դրան հաջորդող նախադասությունները:

Ուսուցիչը պետք ե նախ ամբողջ տեքստը կարդալ տա և ապա հարցնի, թե ամեն տող ի՞նչ ե իրենից ներկայացնում: Ցերե աշակերտներն ասացին, վոր ամեն մի տողը մի նախադասություն ե, այդ նշանակում ե, թե աշակերտները հասկացան ուսուցչի բացատրությունը նախադասության մասին: Ե՛լ ավելի լավ վարժեցնելու համար ուսուցիչը պետք ե առաջարկի այս կամ այն աշակերտին.

— Կարդա առաջին նախադասությունը. — Կարդա յերկրորդ նախադասությունը, — և այլն:

Դրանից հետո աշակերտները պետք ե պատասխաննեն դասագրքի առաջին տողերում առաջարկված հարցերին: (Աթանի առանձին միտք կա այս որինակների մեջ: Ամեն մի տողը քանի միտք և ցույց տալիս»):

Այնուհետեւ պետք ե կատարել նաև յերկրորդ վարժությունը, սակայն՝ նախքան այդ վարժությունը կատարելով՝ պետք ե բանագոր մշակել նկարները հարցնելով.

— Ի՞նչ ե անում այս աղջիկը, ի՞նչ ե անում յերրորդ նկարի մեջ պատճեն:

Պատասխաններ ստանալուց հետո, ուսուցիչը մեկին կարդալ ե տալիս առաջին նախադասությունը, վորից իմացվում ե, վոր աղջկա անունը Հասմիկ ե և նա կարգան ե: Նույն ձեւով կարդում են յերկրորդ և յերրորդ նախադասությունները, ապա ուսուցիչը

առաջարկում ե կատարել յերկրորդ վարժության պատվերը («կարդացելք նախադասությունները նկարների կարգով»): Այդ շահագանց հետ խնդիրը կատարելուց հետո, ուսուցիչը տալիս ե վարժության ներքեւում տրված հարցը:

— Քանի՞ առանձին միտք կա այս որինակների մեջ:

Յերբ աշակերտները պատասխանում են, ուսուցիչը հարցնում ե.

— Ուրեմն քանի՞ նախադասություն կա այստեղ, ապա ուսուցիչը պատասխանն ստանալուց հետո՝ առաջարկում ե կարդալ առաջին նախադասությունը, ապա յերկրորդ, ապա յերրորդ, ապա յերրակացությունն համում, թե ամեն մի միտքը արտահայտվում ե մի նախադասությամբ, այսինքն թե՝ բառերով արտահայտած ամեն մի ամփոփ միտք կոչվում ե նախադասություն:

Այդ բոլորից հետո ուսուցիչը մեկին կարդալ ե տալիս վանդակում յեղած սահմանումը, վոր միանդամայն համընկնում ե ուսուցչի մշակած սահմանումի հետ:

Դրանով առաջին որվա աշխատանքը կարելի յե համարել ավարտված, աշակերտները նախնական գաղափար են ստանում նախադասության մասին: Հաջորդ որը ուսուցիչը կրկնողություն ե կատարում, վորոշում, թե ինչպես են հասկացել նախադասությունը՝ վորքան են սովորել սահմանումը, և ապա առաջարդում յերրորդ վարժությունը:

Յեթե նախորդ դասին հնարավորություն կար, պետք եր բանավոր կիրառվ կատարել յերրորդ վարժությունը, իսկ հաջորդ որը կատարել այդ վարժությունը գրավոր: Այդ նույն յերկրորդ դասին պետք ե գաղափար տալ վերջակետի գործածության մասին, ապա նաև նախադասությունը մեծատառվ սկսելու մասին, դրանից հետո պետք ե կատարել վարժություն 4-րդը, վորը հիշողության մեջ կամրացնի նախադասության ըմբռնումը, ապա նաև վերջակետի ու մեծատառի գործածության հմտությունը (վերջինս նախադասության սկզբին):

Հաջորդ դասը պետք ե նվիրել 5-րդ վարժության, ոգտագործելով այդ վարժությունը անցածը կրկնելու և ամրացնելու համար:

Ուսուցման հաջորդ թեման ե՝ գաղափար նախադասության անդամների մասին: Այդ հասկացությունը անվանդելու համար անհրաժեշտ ե ոգտագործել 6-րդ եղում յեղած նկարները, վորոնք պատկերում են պատմության գանազան ետապները: Ինչպես նախադասության ուսուցման ժամանակ, այնպես ել այդ թեման

ավանդելիս անհրաժեշտ ե նախ մշակել բանավոր խոսքը, նկարների ողնությամբ հորինել պատմություն, ամեն մի նկարի մասին կազմված նախադասությունը կանոնավորել, կրկնել տալ մի քանի անգամ, ապա կարդալ տալ հոդվածը, այնուհետեւ այդ հոդվածի վրա կատարել 6-րդ վարժության մեջ տրված առաջադրանքը:

Յեզրակացությունը կլինի այն սահմանումը, վորը տրված ե 7-րդ եջի վերեվի գծավանդակում:

Հաջորդ թեման կլինի յենթակայի և ստորոգյալի ուսուցումը:

Այդ թեման անցնելուց առաջ նույնպես պետք ե ոգտագործել դասագրքի 7-րդ եջի նկարները, Այնուհետեւ պետք ե կատարել տալ 7-րդ վարժության պատվերը նախ բանավոր, ապա գրավոր:

Յենթակայի ուսուցման համար կարեվոր ե վարժեցնել հարց տալը: Այդ նպատակն ե հետապնդում 8-րդ վարժությունը, վորոտեղ ո՞վ հարցի պատասխանները կտան նախորդ եջի նկարները, վորովհետեւ բոլոր առարկաները յենթակա յեն: Դրանից հետո պետք ե տալ յենթակայի սահմանումը և սովորեցնել այն հարցերը, վորոնց պատասխանում ե յենթական:

Յեկ վերջապես 9-րդ վարժությամբ պետք ե ամրացնել յենթակայի ըմբռնումը: Նույն յեղանակով պետք ե կատարել նաև ստորոգյալի ուսուցումը:

Յենթական ու ստորոգյալը սովորեցնելուց հետո մի շաբաթ պետք ե նվիրել կրկնողության, վորի համար տրված ե 15-րդ և 16-րդ վարժությունները:

Նախադասության յենթակայի և ստորոգյալի ուսուցմամբ ավարտվում ե յենթակայի և ստորոգյալի ուսուցման նախնական շրջանը, դրանից հետո սկսվում ե նախադասության մանրամասն ուսումնասիրելու շրջանը:

Վորովհետև յերեխաներն արդեն գիտեն՝ ի՞նչ ե նախադասությունը, վո՞րն ե յենթական և ստորոգյալը և ի՞նչն ե նախադասության անդամը, ուստի պետք ե գաղափար տալ նախադասության անդամների տարրերության մասին: Անհրաժեշտ ե նախ բացատրել, Վոր յենթակայից և ստորոգյալից բացի մյուս անդամները կոչվում են լրացումներ, դրանից հետո, սովորեցնել, վոր նախադասության յենթական ու ստորոգյալը նախադասության գլխավոր անդամներն են, իսկ մյուսները յերկրորդական անդամներն են: Վորպեսզի յերեխաները համոզվեն այդ բանով, անհրաժեշտ ե բացատրել, վոր յենթական ու ստորոգյալը գլխա-

Վոր են կոչվում, վորովհետեւ առանց դրանց նախադասություն-ներ չեն կազմվի, լրիվ ամփոփ միտք չի արտահայտվի, մինչդեռ առանց լրացումների, միայն յենթակայով ու ստորոգյալով միտք կարող է արտահայտվել, այսինքն նախադասություն կարող է կազմվել:

Դործնական կերպով այդ բանում համոզելու համար, պետք է վերցնել մի ընդարձակ նախադասություն, գրել գրատախտակին և աստիճանաբար լրացումները ջնջել, թողնելով վերջում միայն յենթական ու ստորոգյալը:

Պրինակ՝

Ցուենի հասկը լցվեց հյուրով:

Նախ կզնշենք ցուենի բառը, ապա հյուրով բառը հետևյալ կերպ:

Ֆրենի հասկը լցվեց հյուրով:

Հասկը լցվեց հյուրով:

Հասկը լցվեց:

Վերջին նախադասությունը արտահայտում է միտք և կազմ-ված և յենթակայից և ստորոգյալից միայն, նշանակում է՝ նա-խադասություն՝ կարող և ստացվել առանց լրացումների: Բայց ժենց այդ նույն նախադասությունը նորից լրիվ գրելով գրատախ-տակին նախ յենթական ջնջելով, ապա ստորոգյալը, կարելի յե-ցուց տալ վոր առանց յենթակայի կամ ստորոգյալի նախադա-սություն չի ստացվի, միտք չի կարող արտահայտվել. որինակ՝

Ցուենի հասկը լցվեց հյուրով:

Ցուենի լցվեց հյուրով (ջնջել յենթական):

Ցուենի հասկը հյուրով (ջնջել ստորոգյալը):

Այս որինակը աշքի զարնող պարզությամբ ցուց կտա, վոր յենթական ու ստորոգյալը նախադասության գլխավոր անդամ-ներն են:

Դրանից հետո պետք է բացատրել վոր միայն յենթակայով ու ստորոգյալով կազմված նախադասությունը կոչվում է նամա-ռոտ, իսկ լրացում ունեցող նախադասությունը կոչվում է ընդար-ձակ:

Դրանից անմիջապես հետո պետք է վարժություններ տալ, վորպեսզի աշակերտները հմտանան համարու և ընդարձակ նա-խադասություններն իրարից տարբերելու:

Լրացումները սովորեցնելու համար դասագրքում տրված են մի շարք վարժություններ.

1. Արտագրել և ընդգծել այն անդամները, վարոնք չեն-թակա կամ ստորոգյալ չեն:

2. Արտագրել տեքստը և ընդգծել լրացումները:

3. Արտագրել, գլխավոր անդամները ընդգծել մեկ գծով, իսկ յերկրորդական անդամները կամ լրացումները՝ յերկու գծով:

4. Արտագրել ընդարձակ նախադասությունները և յուրաքան-չուուր անդամի վերեվում գրել նրան տրվող հարցը:

Այդ վերջին տիպի վարժությունը կարևոր է, վորովհետեւ ա-շակերտների հարցադրումն այս կամ այն անդամի նկատմամբ մեծապես ոգնում է նրան՝ վորոշելու նախադասության անդամի տեսակը:

Այդ բոլոր տիպի վարժությունները կատարելով աշակերտ-ները տիրապետում են նախադասության անդամի հասկացու-թյուններին, ուստի կարելի յենթական սույնամսիրու-թյունն ե'լ ավելի բարդացնել:

Անհրաժեշտ ե գաղափար տալ յենթակայի լրացումների մա-սին առանձին և ստորոգյալի լրացումների մասին առանձին, վորպեսզի յերեխան հասկանա, վոր յենթական ու ստորոգյալը նախադասության բեկնեներն են, վորոնց շուրջը հավաքվում են նախադասության մյուս անդամները:

Այդ բաժինը սովորեցնելուց առաջ պետք է համոզին, թե աշակերտներն իրոք տիրապետում են քերականության մինչև այժմ տրված հասկացություններին:


Յեթե ուսուցիչը համոզվի, վոր այդպես չե, ապա պետք է մի ամբողջ շաբաթ նվիրել կրկնողության, մինչեւ վոր յերեխանե-րի համար անցած բոլոր քերականական հասկացությունները սե-փականություն կդառնան: Դրանից հետո պետք է սկսել լրա-ցումների տեսակների ուսուցումը: Լրացումների տեսակների ու-սուցումը պետք է կատարել բոլորովին այլ մեթոդով, այն ե-գրաֆիկ մեթոդը: Դրա համար անհրաժեշտ է վերցնել մի նա-խադասություն, վորի մեջ միայն յենթական ոմի լրացում, և պատկերացնել այդ գծագիրներով, որինակ՝

Հասկերը ծփում են:

Վասկի հասկերը ծփում են:


Ցուենի հասկերը ծփում են:

Պետք է այդ նախադասությունը պատկերացնել հետևյալ գրաֆիկայով:



Գրաքիկայից կպարզվի, վոր վոսկի և ցորենի բառերը պարզաբանում են հասկելը յենթական և կապված են նրա հետ, ուստի յենթակայի լրացումներ են:

Դրանից հետո պետք է գրել մի յերկու նախադասություն, կազմված միայն յենթակալից ու ստորդայլից, յենթակալի համար գտնել լրացումներ, ավելացնել նախադասության վրա և դրաֆիկ ձևով պատկերացնել այդ:



25-րդ վարժությունը (եջ 15) նախապատրաստում և հասկա-
նալու սառորդյալի լրացումները, սակայն այդ վարժությունը կա-
րելի յէ կատարել այն ժամանակ, յեթե յերեխաներին վարժեց-
նենք յենթակայի լրացումների հարցերին (ինչպիսի՞՝ վորպիսի՞,
վո՞ր, ո՞ւմ, ինչի՞, վորքա՞ն):

Ստորոգյալի լրացումների ուսուցումը նոյնպես պետք է կատարել զրաֆիկ մեթոդի ոգնությամբ։ այստեղ ևս պետք է վերցնել մի նախադասություն։ վորն ունենա նախ միայն յենթակա և ստորոգյալ, ապա յենթակա և ստորոգյալ և ստորոգյալի լրացումներ։

ՈՐԻՆԱԿ


Մրջոմբը մոտեցավ.

Մըջոմը մոտեցավ՝ առվակին

ՄԻՋՈՒՄՆ ընկավ ջուրը

Մրցյունը բարձրացավ ճյուղը

Գրաֆիկ կերպով դա կարելի յե պատկերացնել հետևյալ կերպ:



Այս գրաֆիկայի մեջ յենթական ցերւում և մենակ, մինչդեռ ստորոգյալից կախված են մի շարք բառեր: Դա կոդնի աշակերտին՝ հիշելու ստորոգյալի լրացումները: Մակայն լավ ըմբռնելու համար անհրաժեշտ է, վոր նա վարժվի հարցեր տալ մեկնելով ստորոգյալից:

Որինակ՝ Մըջումը մոտեցավ ինչի՞ն (առվակին):

Մրցյամն ընկավ ո՞ւր (ջուրի)

ՄՐՋԱԿԱՎ ԲԱՐՁՐԱԳԱՎ ՈՒՐ (ՃԱՊԵՐ)

Մրցյումը տեսավ ո՞ւմ (մի վորսորդի)

Ստորոգյալի լրացումներկ հարցերը շատ են, ուստի Հիշել
մի կարելի, պետք ե հասկանալ:

27-ից մինչև 38-րդ վարժությունները տրված են անցած կա-

նոնները կրկնելու, հիշողության մեջ ամրացնելու համար: Այստեղ տրված են թե՛ գծագրեր, թե՛ արտագրություն ընդգծումներով, թե՛ հարցերի փոխարեն լրացումները զնել, թե՛ համառոտ նախադասությունները ընդարձակ դարձնել և թե՛ տեքստի մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարել: Այսպիսի այլազանքարժություններն աշակերտին ազատում են ձանձրութից, աշխատանքի միապաղաղությունից, միաժամանակ զանազան պրիումներով ամրացնում են նրա գիտակցության մեջ քերականական հասկացությունները:

Մենք հանձնարարում ենք յուրաքանչյուր գրավոր վարժությունը նախադասությունները բանավորով, վորպենզի աշակերտները սխալներ շանեն, դժվարությունների առաջ կանգ շառնեն և վարժություններ կատարելու վստահություն ձեռք բերն; Ամեն մի վարժություն կատարելուց առաջ տեքստն անպայման պետք է կարդալ տալ իբրև կարդալու նյութ և դրանից հետո միայն ինդիր առաջարել՝ տեքստի վրա կատարելու համար:

Մի նախադասության ուսումնասիրությունն ավարտելոց հետո անհրաժեշտ ե անցնել նախադասության տեսակների ծանոթացմանը, նախ ըստ բնույթի, ապա ըստ կազմության, իսկ վերջում՝ ճշ-լոր վարժությունից սկսած պետք է անցնել այն կետադրությունը, վոր կապված է անցած նախադասությունների բընույթի և կազմության հետ:

Այդ բաժինը սովորեցնելու համար պետք է ոգտագործել նաև ընթերցանության դասագիրքը, վորտեղ վարժության հնարավորություններն ավելի մեծ են:

Նախադասության ուսումնասիրության պետք է նվիրել ամբողջ կես տարի, քանի վոր քերականության ուսուցման ամենակարևոր բաժինն է այդ: Վերջին յերեք շաբաթում պետք է կատարել շաբահյուսական վերլուծություններ ըստ նախադասության բնույթի, կազմության, և անդամների հետեւյալ որինակով.

1. ԳՅՈՒՂԱՑԻՆ ԻՐ ԲՈՒՏԱՆՈՒՄ ԳԱՐՆԱՆԸ ՍԵՐՄ ԵՐ ՑԱՆՈՒՄ:

Այդ նախադասությունը ընդարձակ պատմողական նախադասություն է:

Ո՞վ.— գյուղացին— յենթակա:

Ի՞նչ եր անում.— ցանում եր— ստորոգյալ:

Վա՞յրուեղ.— իր բոստանում (ցանում եր)— ստորոգյալի լրացում:

Յե՞րբ.— գարնանը (ցանում եր)— ստորոգյալի լրացում:

Ի՞նչ.— սերմ (ցանում եր)— ստորոգյալի լրացում:

Կարելի յե վերլուծել նաև այսպես:

Ո՞վ եր ցանում.— գյուղացին— յենթակա:

Գյուղացին ի՞նչ եր անում.— ցանում եր— ստորոգյալ:

Ցանում եր վորտեղում.— իր բոստանում— ստորոգյալի լրացում:

Ցանում եր յե՞րբ.— գարնանը— ստորոգյալի լրացում:

Ցանում եր ի՞նչ.— սերմ— ստորոգյալի լրացում:

Վերլուծությանը լավ վարժված աշակերտին կարելի յե վերլուծել տալ նաև այսպես:

Գյուղացին— յենթակա:

Ցանում եր— ստորոգյալ:


Իր բոստանում— ստորոգյալի լրացում:

Գարնանը— ստորոգյալի լրացում:

Սերմ— ստորոգյալի լրացում:

Ցերեմն առ յերեմն պետք է կազմել տալ նախադասության գծագրեր:

2684



ԳՈՅԱԿԱՆ ԱՆՎԱՆ ՅԵՎ ՀՈԼՈՎՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ցերրորդ դասարանի ուսման տարվա ճշ-լոր կեսը պետք է նվիրել գյուղական անումը և հոլովները սովորեցնելուն: Քերականության ուսուցման հանդուցային խնդիրներից մեկն ել այդ և, ուստի դրան պետք է արամագրել կես տարի ժամանակ:

Գոյականի ուսուցման նախապայմանն այն է, վոր յերեխա-



ները յերկրորդ դասարանից արդեն գիտեն, թե ինչ ե առարկա, և կարդացած հատվածի մեջ գտնում են առարկա ցուց տվող բառերը:

Այնուամենայնիվ անհրաժեշտ ե աշակերտության այդ գիտնիքունը ստուգել, կրնողությունը կատարել և դրա հիման վրա կազմակերպել գոյականի ուսուցումը: Այստեղ ևս պետք ե ոգտագործել իլյուստրատիվ մեթոդը: Քիրականության և ուղղագրության դասագրքի 35-րդ եջում կա մի նկար, վոր պատկերում ե ուշագրանցում: Այդ նկարն ոգտագործելով՝ իբրև բանավոր խոսքի նյութ, աշակերտների ուշագրությունը պետք ե հրավիրել նկարում պատկերված մի շարք առարկաների վրա, վոր են՝ ծառ, տերև, կոռոնկ, տրակտոր, սարք և այլն: Դրանից հետո պետք ե կարդալ «Աշուն» վերնագիրը կրող 4-տողանի վոտանավորը և պարզել, թե ինչ առարկաների անուններ են տրված այդտեղ (դաշտ, անտառ, ծաղիկ, թռչուն):

Հաջորդ յերկու վարժության միջոցով (66—67) պետք ե սովորեցնել, թե ինչ հարցերի յեն պատասխանում առարկա ցուց տվող բառերը: Վարժություն 67-րդը շատ հարուստ ե առարկա ցուց տվող բառերով, ուստի այդ տեքստի վրա պետք ե կատարել նախ բանավոր, ապա գրավոր վարժություն: Այդ վարժությունները կնախապատրաստեն յերեխային-հասկանալու 37-րդ եջում տրված գոյական անվան սահմանումը: Սահմանումը տալուց հետո պետք ե կատարել 68-րդ վարժությունը, նախ բանավոր, ապա գրավոր: Այդ վարժության միջոցով աշակերտները կհմտանան գոյականը գտնելու նախադասության մեջ և նրա համար տալու պահանջված հարցը:

Յերրա աշակերտները գոյական անվան հասկացությունը ունեն, ապա կարելի յե առանց նախապատրաստության տալ հասարակ անվան սահմանումը և վարժություն կատարել: 38-րդ եջում տրված նկարը զրուցի առարկա պիտի դառնա միայն «Գյուղացին ու արջը» վոտանավորը կարդալուց հետո: Հատուկ անումների ուսուցումը կատարելիս պետք ե զգուշանալ նրանց մասին սխալ գաղափար տալուց: Հատուկ բառը հաճախ շփոթության մեջ ե գցում, և շատերը կարծում են, վոր հատուկ անումը տրվում ե աշխարհում գտնվող միակ առարկային: Այդ իհարկե սխալ ե, քանի վոր աշխարհի բոլոր առարկաներից յուրաքանչյուրը միակ ե, մեկ ուրիշը չի կարող լինել նրա նույնությունը, ուս-

տի՝ յեթե առարկայի այդ միակությունը գիտակցվում ե, ինչպես որինակ՝ արև, լուսին, նրա անունը հատուկ լինել չի կարող: Հատուկ անունը միակության գաղափար չի արտահայտում, ընդհակառակը, նա ցուց ե տալիս նման առարկաներից միայն մեկը:

Հատուկ անվան կարիք ե զգացվում, յերբ միանման առարկաներ կան և դրանցից մեկին կամ յուրաքանչյուրին պետք ե տարբերել մյուսներից: Ահա այդ միանման առարկաներից կամ իրար նման առարկաներից մեկին տարբերելու համար ե, վոր տրվում ե հատուկ անունը: Այդ ե պատճառը, վոր յերբ մենք յերկրագունդ, արեվ, լուսին գաղափարները ուզում ենք սովորական հասկացությամբ արտահայտել, սկսում ենք փոքրատառով: Որինակ՝ մեզ հայտնի յե, վոր արել անվագձ լուս ե տախի բոլորին, լուսինը պետք ե գալիս զիշերը, յերկրագունդը պատվում ե իր շուրջը:

Այս նախադասությունների մեջ արև, լուսին՝ և յերկրագունդը բառերը վերցված են իրենց սովորական իմաստով. սակայն յերբ արև բառն ասում ենք մյուս աստղերի անումներից տարբերելու համար կամ լուսին ասում ենք մոլորակային այլ ուղեկիցների հետ միասին կամ յերկրագունդ ասում ենք այլ մոլորակներից տարբերելու համար, այդ դեպքում այդ բառերը սկսում ենք մեծատառով: Որինակ՝ սատղաբաշխությանը հայտնի յեն մի շարք աստղեր, վորոնք կազմում են առանձին համակարգություն, որինակ՝ Սիրիոս, Արեւ:

Մեզ հայտնի յեն մի շարք մոլորակային ուղեկիցներ, որինակ՝ յերկրագնդինը՝ Լուսինը, Սատուրնինը...

Արեգակնային համակարգության մոլորակներն են՝ Փայլածու, Արուսյակ, Յերկրագնդ, Տրատ, Սատուրն, Նեպտոն, Ուռան:

Այս որինակը ցուց է տալիս, վոր հատուկ անունը տրվում է առարկային իր նմաններից տարբերելու համար, այսինքն՝ միաւուսակ առարկաներից ՄիԱՅՆ ՄԵԿԻՆ տրված անունը կոչվում է ՀԱՏՈՒԿ անուն:

Հատուկ անվան սահմանումը տալուց հետո կարելի յե ուղակի թվել, թե ինչի անուններ կլինեն հատուկ (քաղաքների, գյուղերի, լճերի, մարդկանց, յերկրների և այլն):

Հատուկ անունները մեծատառով սկսելում վարժեցնելու հա-

մար ամենալավ միշոցն է գրել տալ դասարանի աշակերտների անուններն ու ազգանունները: Յուրաքանչյուրը այդ վարժությունը կատարելով կկազմի տարրեր ցուցակ, քանի վոր կսկսի իր մոռնի ընկերոցից:

Դա կլինի նաև հիշողության և ուշադրության մարդանք, միաժամանակ կվարժեցնի անուններ ճիշտ գրելուն:

Դասագրքում հատուկ անունների շուրջը տրված լարժությունը «Գիքորի հոր նամակը» հատվածն է: Այդ նամակը կարդալիս պետք է մի փոքրիկ զրույց ունենալ յերեխաների հետ «Գիքոր» պատմվածքի մասին: և հանձնարարել տանը կարդան: Դա առիթ կհանդիսանա և բանավոր խոսքի և տեսային ընթերցանության վարժվածություն ստեղծելու համար: Գոյականներին վերաբերող հաջորդ հարցը յեղակի և հոգնակի թվերի գաղափարներն են, վորոնք ծանոթ են յերեխաներին Հ-րդ դասարանից:

Այստեղ միայն պետք է կրկնել, ասելով նաև բոլոր մասնակի դեպքերն ու բացառությունները:

42 և 43-րդ եշերում տրված նկարները կարող են ծառայել իրեն հարմար նյութ բանավոր խոսքը մշակելու համար, հատկապես հոգնակի թվով գոյականներ գործածելու համար: Առաջին նկարում կան հոգնակի թվով հետևյալ գոյականները՝ ծառեր, տրակտորներ, թռչուններ, յերկրորդ նկարում՝ յերեխաներ, սայլեր, դեղքեր, լեռներ, խոտեր և այլն:

Այդ վարժությունները շատ հիմնական կերպով կարմատավորեն աշակերտների հիշողության մեջ, գոյականների թիվը և նրանց գործածությունը՝ բանավոր խոսքի մեջ:

Գոյականների թիվը հետո պետք է տալ հոդի գաղափարը, վորի համար տրվում է «Վոսկե ձկնիկ»-ից մի հատված՝ իրեն վարժություն: Այդ հատվածը պետք է ոգտագործել վոլ միայն քերականական վարժության համար, այլ նաև իբրև առիթ աշակերտներին կարդալ տալու այդ հեքիաթն ամբողջությամբ, վորպես արտադասարանական աշխատանք:

ՀՈԼՈՎՄԱՆ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ

Քերականության այս բաժինն ուսուցման բեսակետից ամենադժվար բաժիններից մեկն է, Հոլովում գաղափարը խիստ վերացական գաղափար է, ամեն մի փորձ՝ նրան կոնկրետ դարձնելու համար:

յու հաճախ հանգում և վուզարացման: Ֆորմալիստական քերականությունը այդ վերացականությունը կզնկրետ դարձնելու համար դիմեց ձևերի ուսուցման, զրկեց այդ կատեգորիան բովանդակությունից:

Մեթոդոգիական սխալմունքից բացի, այդ մեթոդը կատարում էր նաև մեթոդական սխալմունք. նա կարծում էր, թե հոլովական ձևերի անգիր անելը բավական է հոլովման գաղափարը՝ հասկանալու համար, բայց հենց ձեւերն անգիր անելը խանգարում է հոլովման գաղափարի եյությունը. հասկանալուն: Սովորողին թվում է, թե ամբողջ իմաստությունը այդ ձեւերն անգիր անելն է և այդ հաղթահարելուց հետո նկատում է, վոր իր անգիր սովորած անբովանգակ ձևերն անհասկանալի յեն, աննպատակ և նույնիսկ անտեղի: Դրանից ել բղնում է հենց հակաքերականական ուղղությունը: Մինչդեռ հոլովումն, ամենից առաջ, դա բովանդակություն է, հոլովման միջոցով ստեղծվում են նախադասություն կառուցելու բոլոր հնարավորությունները, այսինքն ամփոփ միատեղ արտահայտելու միջոցներ:

Նախադասության բովանդակության փոփոխությամբ և պայմանավորված զանազան՝ հոլովների գործածությունը. որինակ՝

Աշակերտը գնաց դպրոց:

Աշակերտի գրեթե նոր են:

Այս նախադասությունների մեջ աշակերտ բառի յերկրորդ ձևի գործածությունը հնարավոր դարձավ միայն այն պատճառով, վոր նախադասության բովանդակությունը փոխվեց: * Ուստի հոլովման ուսուցումը հիմնականում պետք է յելակետ ունենա բառաձևի բովանդակությունից:

Ֆորմալիստական քերականության մեթոդիկան ուներ նաև մի յերկրորդ հիմնական արատ, դա այն եր, վոր առանձին բառերի հոլովական ձևերն անգիր, աշակերտը հոլովներն ըմբռնում էր իբրև առանձին վերցրած բառի առանձին ձևեր, առանց իմանալու այդ ձևերի նշանակությունը: Աշակերտի համար հոլովումը մնում էր անբացարեկի, անծանօթ մի յերեւոյթ, terra incognita — չճանաչված աշխարհ: Մինչդեռ բառի առանձին հոլովական ձև գործություն չունի, կան հոլովական ձևեր՝ միայն և մի՛ միայն նախադասությունների մեջ: Յերբ բառն առանձին հո-

լովում են, այստեղ պարզապես կրծատում են կատարում, նա-
նախադասությունների միջից վերցնում են միայն այդ բառի
ձևերն առանձին: Յովաքանչուր հոլովական ձև, դա մի համա-
ռոտված նախադասություն ե, վորից կա միայն այդ ձևով ար-
տահայտված անդամը, իսկ մյուս անդամները գեղված են.
ոշինակ:

Սեռական՝ աշակերտի:

Այդ աշակերտի ձևը մի նախադասության հատկացրցիշ ե,
այդ նախադասության մնացած բոլոր անդամները գեղված են:
Յովաքանչուր դեպքում կարող ենք մենք մեր ցանկացած բո-
վանդակությամբ նախադասություն կառուցել, վորի մեջ աշակեր-
տի բառը լինի հատկացրցիշ, այսինքն՝ վերականգնել նախա-
դասության բոլոր գեղված անդամները. որինակ՝

Աշակերտի պատասխանները լավ եին:

Աշակերտի պայուսակը կախված ե պատից:

Աշակերտի ընկերները գնացին զբոսանքին

Այդ ամենը նշանակում ե, թե հոլովների ուսուցումը պետք
է կատարել նախադասությունների միջոցով, հիմնական յելակետ
ունենալով այդ հոլովների բովանդակությունը:

Հոլովները միմյանց հետեւց շարելը ունի միայն տեխնիկա-
կան արժեք, իմաստային վոլ մի արժեք այդտեղ չկա: Ամեն մի-
հոլով մյուսից անկախ ե և հանդիսանում ե առանձին նախադա-
սության անդամ: Նշանակում ե՝ հոլովների ուսուցումը պետք ե
կատարել առանձին, առանց կապելու միմյանց հետ ըստ շաղթի:
Յեթե այդ կապակցությունը հնարավոր ե, ապա այդ հնարավոր
ե միայն իրեւ նախադասության անդամների կապակցություն,
վորովհետև միևնույն նախադասության մեջ միևնույն գոյականը
կարող ե տարրեր անդամներ լինել:

Որինակ՝ աշակերտն աշակերտին ոգնում ե:

Այստեղ աշակերտ բառի տարրեր հոլովներ նախադասության
տարրեր անդամներ են: Հոլովների ուսուցումը սկսվում ե ներա-
ծական դասով, վորի ընթացքում ուսուցիչն աշակերտներին բա-
ցատրում ե, թե ի՞նչ ե հոլովում: Այդ նպատակով նա վերցնում ե
մի նախադասություն, վորտեղ վորեն գոյական յենթակա յե,
իսկ մի ուրիշ գոյական նախադասության մի այլ անդամ ե:
Գրատախտակի վրա այդ յերկու գոյականների վերջավորություն-
ները միմյանց հետ փոխելով՝ ստանում ե մի նոր բովանդակու-

թյամբ նախադասություն, վորտեղ նախորդ նախադասության,
յենթական դառնում ե լրացում, իսկ լրացումը դառնում ե յեն-
թակա:

Որինակ՝ Արամը կանչեց Գոհարին:

Գրատախտակին գրելով այդ նախադասությունը, ուսուցիչը
նույն նախադասությունը գրում ե յերկրորդ անգամ, հետո Արա-
մը և Գոհարին գոյականների վերջավորությունները տեղափոխում
ե: Արամը բառի ը հոդը ջնշելով, ավելացնում ե ին վերջավորու-
թյունը, իսկ Գոհարին բառի ին ջնշելով ավելացնում ե ը հոդը,
ստացվում ե հետևյալ նախադասությունը:

Արամին կանչեց Գոհարը:

Համեմատելով այդ յերկու նախադասությունները՝ ուսուցիչը
պարզում ե, վոր առաջին նախադասության մեջ Արամը յենթա-
կա յե, իսկ Գոհարին լրացում, մինչեւ յերերորդ նախադասու-
թյան մեջ, Արամ գոյականը դառնում ե լրացում, իսկ Գոհարը՝
յենթակա և զրա հետևանքով տեղի յե ունենում իմաստի փոփո-
խություն, վորովհետև փոփոխվում են գոյականների դերերը,
պաշտոնները:

Այդ տեղի յե ունենում վերջավորությունների փոփոխության
հետևանքով: Ուսուցիչը ցուց տալով այդ, բացատրում ե, վոր-
գոյականի այդպիսի փոփոխությունը նախադասության մեջ, կոչ-
վում ե հոլովում:

Այդ գաղափարը բացատրելուց հետո, ուսուցիչը քերականու-
թյան դասագրքի 45-րդ եջի՝ վերևում կարդում ե սահմանումը,
ապա բանավոր և գրավոր կատարել տալիս վարժություն 80-րդը,
դրանից հետո կարդում այդ եջում զետեղված ներքելի սահմանու-
մը և այդքանով առաջին որը բավականուում:

Հաջորդ որը ուսուցիչը ոգտագործում ե 46-րդ եջում՝ յեղած-
նկարը և, յեթե հնարավոր ե, պատրաստել ե տալիս այդ բովան-
դակությամբ պլակատներ, այնուհետև ցուցադրելով այդ պլա-
կատները, ուսուցիչը հարցերի միջոցով կազմել ե տալիս դասա-
գրքի նախադասությունները (աշակերտն ի՞նչ ե անում: Աշակեր-
տը կարդում ե):

Վերլուծել տալով այդ նախադասությունները, պարզում ե,
վոր աշակերտը և բաժակը բառերը յենթակա յեն ու ասում ե, թե
ահա այդ յենթականները դրված են ուղղական նոլովով կամ

գրանց ձեր, վոր կապված ե դրանց պաշտոնի հետ (յենթակա), կոչվում ե ուղղական հոլով:

Դրանից հետո ուսուցիչը կարդում ե սահմանումը, կրկնել տակա և ապա կատարում վարժություն 82-րդը և 83-րդը:

Ուսուցիչը վարժության ընթացքում բացատրում ե, վոր ուղղական հոլովը գտնելու համար, պետք ե գտնել յենթական, կամ յենթական միջտ ուղղական հոլովով ե լինում: Ուստի՝ յեթե վորեւ բառ ցանկանում ես ուղղական հոլովով դնել, պետք ե կազմես պահպիսի նախադասություն, վորի մեջ այդ բառը լինի յենթակա: Մի շարք բանավոր վարժություն կատարելուց հետո պետք ե վերացնել աշխատանքը, սակայն ընթերցանության դասին ընթերցանության գրքի մեջ հանդիպող հարմար նախադասությունների մեջ պետք ե գտնել տալ ուղղական հոլովով դրված գոյականները: Դրանով պետք ե զբաղվել առնվազն 4—5 որ:

Ցերք ուսուցիչը համոզվում ե, վոր աշակերտները ուղղական հոլովը հասկացել են և վարժ կերպով գտնում են, կարող ե անցնել սեռական հոլովի ուսուցման:

Այդ նպատակով բաց ե անել տալիս քերականության և ուղղագրության դասագիրքը և 47-րդ եջում տրված նկարների շուրջը հետևյալ հարցերը տալիս՝

— Ի՞նչ ե կախված պատից:

Աշակերտ.— Պայուսակը կախված ե պատից:

Ուսուցիչ.— Ո՞ւմ պայուսակն ե կախված պատից:

Աշակերտ.— Աշակերտի պայուսակը կախված ե պատից:

Ստացված նախադասությունը գրում ե գրատախտակին, ապա վերլուծել տալիս և գտնում, վոր պայուսակը յենթակա յե, կախված ե՝ ստորոգյալ, պատից՝ ստորոգյալի լրացում, իսկ աշակերտի՝ յենթակայի լրացում ե: Գրատախտակին գրվում ե հետևյալ ձևով.

Պայուսակ— յենթակա:

Կախված ե՝ ստորոգյալ:

Պատից (կախված ե)՝ ստորոգյալի լրացում:

Աշակերտի (պայուսակը)՝ յենթակայի լրացում:

Այսուհետև ուսուցիչը ուղագրություն ե դարձնում վերջին տողի, վրա, ասում ե.

— Մենք վորոշեցինք, վոր աշակերտի ձեր յենթակայի լրացում ե:

Այժմ ասացե՛ք, աշակերտի ձեր յենթակայի ի՞նչն ե ցուց տալիս:

Ո՞ւմն ե պատկանում պայուսակը:

Աշակերտ.— Պայուսակը պատկանում ե աշակերտին:

Ուսուցիչ.— Այս ամբողջ միտքը, այսինքն թե՝ պայուսակը պատկանում ե աշակերտին, վո՞ր լրացումից ե յերևում, վո՞ր կապակցությունից ե յերևում:

Աշակերտ.— Աշակերտի պայուսակը կապակցությունից ե յերևում:

Իսկ աշակերտի պայուսակը կապակցության մեջ վո՞րն ե պատկանելություն ցույց տվող ձեր:

Աշակերտ.— Աշակերտի ձեր, վորովհետև դրանից իմանում ենք, վոր պայուսակը պատկանում ե աշակերտին:

Ուսուցիչ.— Ուզեմն աշակերտի ձեն ի՞նչ ե ցույց տալիս:

Աշակերտ.— Աշակերտի ձեր ցույց ե տալիս յենթակայի պատկանելությունը:

Ուսուցիչ.— Ահա այդպիսի ձեր, այսինքն գոյականի պատկանելություն, ցույց տվող ձեր կոչվում ե սեռական հոլով:

Այդ նույն ձեի վարժություն կատարում ե նաև 2-րդ միջնորդ և դրանից հետո կարդում 48-րդ եջի սահմանումը ու կատարում բոլոր վարժությունները:

Ամեն մի հոլովը սովորեցնելիս, ուսուցիչը պետք ե նաև սովորեցնի, թե ինչ հարցերի յե պատասխանում այդ հոլովը:

Այսպես սովորեցնելով բոլոր հոլովները, վերջում տրվում է հոլովման աղյուսակը նախ նախադասություններով և ապա առանձին բառերով: Յուրաքանչյուր հոլով՝ ավանդվում ե մի քանի դրում: Յուրաքանչյուր հոլովի շուրջը կատարվում են թե՝ բանավոր և թե՝ գրավոր վարժություններ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Բայի ուսուցումը կատարելու համար պետք ե ոգտագործեն աշակերտների տեղեկությունները նախադասության մասին: Վերջ վում ե մի նախադասություն, որինակ՝

Աշակերտը գրում ե:

Աշակերտներն իրենք պարզում են, վոր այստեղ աշակերտը

յենթակա յե, գրում ե՝ ստորոգյալ: Աշակերտը բառը ցուց ե տակիս անձ, իսկ գրում ե՝ նրա գործողությունը: Առաջարկվում է աշակերտներին բերել մի շարք բառեր, վորոնք ցուց են տալիս առարկայի գործողություն: Այս որինակները կարող են լինել՝ ուսում ե, խոսում ե և այլն: Պետք ե ընդգծել վոր այս բառերն արտահայտում են վոլ միայն գործողություն ընդհանրապես, այլ և ավլալ անձի, այսինքն յենթակայի գործողություն: Այդ դեպքում նրանք, վորպես նախադասության անդամ, կոչվում են ստորոգյալ: Բայց ա՛յտ բառերը, բացի նրանից, վոր ցուց են տալիս կոնկրետ անձի կոնկրետ գործողություն, նաև ցուց են տալիս ընդհանրապես գործողություն՝ մի գործ անել կամ լինել. որինակ՝

Գրում ե-գրել, ուսում ե-ուսել, խոսում ե-խոսել, կարդում ե-կարդալ և այլն: Ուսուցիչը պետք ե իմանա, վոր այն բառերը, գորոնք ընդհանրապես ցուց են տալիս մի բան անելու կամ լինելու, այսինքն գործողության կամ յեղելության գաղափարներ (առանց հաշվի առնելու, թե բառն արտահայտում ե վորնե անձի գործողություն, թե ընդհանրապես գործողություն), կոչվում են բայց: Աշակերտին պետք ե սովորեցնել՝ մի բան անել կամ լինել ցուց տվող բառերը կոչվում են բայց:

Դիմեցի Բայերը նախադասության մեջ վորպես ստորոգյալ, սովորաբար, արտահայտում են տվյալ յենթակայի դոկտորությունը. որինակ՝

Յես գրում եմ: Գրում եմ՝ ցուց ե տալիս, վոր գործող անձը՝ յես եմ՝ խոսող անձը:

Դու գրում ես: Գրում ես՝ ցուց ե տալիս, վոր դո՞ւ յես գործում, այսինքն գործող անձը խոսակիցն ե:

Նա գրում ե: Գրում ե՝ ցուց ե տալիս, վոր նա՛ յե գործում, այսինքն գործող անձը մեր յերրորդն ե (վոլ խոսողը և վոլ խոսակիցը):

Այս յերեք դեմքերից դուքս այլևս դեմքեր չկան, այդ պահանջառով դեմքերը բացատրել շատ հեշտ ե: Յերբ գործողություն կատարողը ասողն ե, բայց կոմենա առաջին դեմք, յերբ գործողություն կատարողը անմիջապես խոսակիցն ե, բայց կոմենա յերկրորդ դեմք, իսկ յերբ գործողություն կատարողը վոլ խոսողն ե, վոլ ել խոսակիցը, այլ մեկ. ուրիշը, բայց կոմենա յերրորդ դեմք: Դեմքերը բացատրելուց հետո առաջարկվում ե աշակերտներին մի բայց գործածել յերեք դեմքով. որինակ՝ նստել:

Առաջին դեմքով կլինի՝ նստում եմ, յերկորդը դեմքով՝ նստում ես և այլն: Յերբ աշակերտներն այդ սովորում են, ուսուցիչն առաջարկում ե տվյալ հատվածից արտագրել բայերը և վորոշել նրանց դեմքը: Դրանից հետո կաղելի յե առաջարկել մի հարմար ժամանց գործությունը: Վերաբերյալ կաղելի յե առաջարկել մի հարմար հատված, վորն աշակերտները պետք ե արտագրեն, համապատասխան կերպով փոխելով բայերի դեմքը:

Այսպիսի վարժություններն ամրացնում են աշակերտների հիշողության մեջ դեմքերի գաղափարը:

Դեմքերի ուսուցումն ավարտելուց հետո ուշադրությամբ նշումների թյուն ե դարձվում, վոր բայցի վերջավորության փոփոխությունն արտահայտում ե, թե վոր դեմքն ե կատարում գործողությունը:

Հայերենի ներկա ժամանակն իրապես բայցի վերջավորության փոփոխության գաղափարը տալ չի կարող, քանի վոր այստեղ վոլ թե բայցի վերջավորությունն ե փոփոխվում, այլ ոժանդակ բայց ե փոփոխվում: Լավ կլինի վերցնել բայցի կատարյալ ժամանակը. որինակ՝ գրեցի, գրեցիր, գրեց: Այստեղ պարզ կերպով յերկում ե բայցի վերջավորության փոփոխությունը դեմքերով: Նույնպես և ըղձական յեղանակը՝ գրեմ, գրես, գրի և այլն: Բայցի հետ պետք ե գործածել և անձնական դերանումը (յես գրեցի, յես գրեմ):

Հաջորդ դասերին պետք ե բացատրել՝ ինչպես գոյականներն ունեն յեղակի և հոգնակի, այնպես ել դեմքերը կարող են յեղակի և հոգնակի լինել, վորովհետև բայերն իրեւ ստորոգյալ համաձայնում են յենթակայի հետ դեմքով և թվով:

Հոգնակի առաջին դեմքը կլինի՝ գրենք, յերբ խոսողն իր և յուրայինների մասին ե խոսում (մենք գրենք):

Յերկրորդ դեմքը կլինի «գրեմ», վերը խոսողը գործ ե ածում իր խոսակիցների գործելու մասին (դրի՛ք գրեմ), և, վերջապես, յերրորդ դեմքը կլինի՝ գրեն, յերբ խոսողն ասում ե ուրիշների գործողության մասին: Այս ըմբռնումները տալուց հետո պետք ե կատարել վարժություններ: Որինակներ բերում են թե՛ իրենք աշակերտները, և թե՛ ինքն ուսուցիչը: Միշտ ձեռնտու յե, յերբ վերցրած որինակները կոնկրետ ներգործական գործողություն առաջահայտող բայց ի բ են: Այդ դեպքում թե՛ խոնարհումն ե հեղտանում և թե՛ խոնարհման ըմբռնումը դյուքին դառնում: Այդ

վարժությունից հետո պետք ե կրկին անգամ կպտարել վերևում հանձնարարված վարժությունը։ այսինքն՝ առաջարկել անցած հոդվածի մեջ գտնել բայց բայց և վորոշել նրանց դեմքը։ Այդ վարժությունները վերջնականապես կամրացնեն բայցի ըմբռնումը և հասկանակի կղարձնեն այն, վոր խոնարհումը— դա բայցի փոփոխությունն ե, վորով արտահայտվում ե յենթակայի գործողությունը։ Սրանով սակայն չի սպառվում խոնարհման ընորոշումը։ Հիմնականում խոնարհումը բայցի վերջավորության փոփոխությունն ե, վորով արտահայտվում ե յենթակայի գործողությունը ժամանակի մեջ։ Այդ ե հիմնականը խոնարհման ըմբռնման մեջ և դրա մասին ե, վոր պետք ե գաղափար տալ աշակերտներին։ Դեմքերի փոփոխությունը դա բայցի սուկ համաձայնությունն ե յենթակայի հետ։

Վորպեսզի ժամանակի հասկացություն տրվի աշակերտությանը, փոքրիկ զրուցով պետք ե նրանց ծանոթացնել ժամանակի յերեք հիմնական գաղափարների հետ՝ ներկայի, անցյալի և ապառնիկի։ ներկան բացատրելով, վորպես ապրած մոմենտի գաղափար, անցյալը՝ վորպես ապրած մոմենտին նախորդող ժամանակի գաղափար, իսկ ապառնին՝ վորպես ապրած մոմենտին հաջորդող ժամանակի գաղափար։

Մեր միտքն ընդունակ ե ըմբռնելու գործողությունները վո՞չ միայն ապրած մոմենտին, այլև ապրած մոմենտից առաջ և հետո։

Ուստի բայցի փոփոխության միջոցով կարողանում ենք ժամանակի այդ հիմնական գաղափարներն արտահայտել։ Որինակ, յերբ մենք ասում ենք. «Ճես գրում եմ» կամ «Աշակերտը գրում ե»— այդ նշանակում ե, թե յենթական իր գործողությունը սկսել և կատարում ե տվյալ մոմենտին։ Բայց՝ «Ճես գրեցի», «Աշակերտը գրեց» նախադասությունների մեջ բայցի այդ նոր ձևերով արտահայտվում ե մի գործողություն, վոր կատարված անցած ե, և կամ կատարված ե անցյալում։ «Ճես գրելու յեմ», «Աշակերտը գրելու յե»— նախադասություններն արտահայտում են մի գործողություն, վոր դեռ չի կատարվել և հետագայումն ե կատարվելու։ Ուստի յերբ մենք պատմում ենք յերեկվա կատարած վորում գործողության մասին, մենք գործ ենք ածում բայց բայցի անցյալ ժամանակը։ Յերբ մի պատմություն ենք պատմում, վոր նյութը կատարվում ե տվյալ մոմենտին, մենք գործ ենք ա-

ծում բայց ի ներկա ժամանակը, իսկ այն պատմությունը, վորի գործողությունը պիտի կատարվի հետո, պահանջում ե գործածել բայցի ապառնի ժամանակը։ Այս հասկացությունները շատ պարզ հասկացություններ են ժամանակի մասին և միանգամայն ըմբռունելի՝ տարրական դպրոցի աշակերտների համար։

Բայց ի ժամանակների ըմբռնումը անպահովելու համար անհրաժեշտ ե վարժություններ կատարել։ Պետք ե առաջարկել աշակերտին պատմել իր կյանքից մի դեպք՝ անցյալում կատարված։ Այդտեղ անպայման նա կգործածի բայցի անցյալ ժամանակները։ Նրա ուշադրությունը հենց տեղն ու տեղը պետք ե հրավիրել իր գործածած այս ձևերի վրա և ցուց տալ նրանց միասնականությունը ժամանակի իմաստով։ Մեկ ուրիշին կարելի յի պատմել տալ այն ամենի մասին, ինչ վոր կատարում են դասարանում այդ մոմենտին։ Ուշադրություն հրավիրելով բայցի գործածված ձևերի վրա, ամրացվում ե ներկայի ըմբռնումը։ Յեվ վերջապես, մի յերրորդ աշակերտ կարող ե պատմել այն գործերի մասին, վոր դասարանը պետք ե կատարի հետագայում կամ մյուս որը։ Այնուհետև վարժությունը պետք ե տեղափոխել գրքի վրա։ Ամեն անգամ կարդացած հոդվածի մեջ պետք ե ընտրել նախադասություն, վորտեղ գործ ե ածված բայց այս կամ այն ժամանակով և յուրաքանչյուր անգամ հարցնել, թե՝ վո՞ր ժամանակն ե պրադաստությունների վերլուծության համար և թե՝ հոլվների վերաբերմաք կամ բայց բայց նյութներու կամ աշակերտություններու կամ աշակերտություններու կամ աշակերտություններու այնպիսի նախադասություններ, վորոնք առավել շափով ձեռնտու յեն այդ կանոնները յուրացնելու կամ պարզաբանելու նպատակներին։

Տարրական դպրոցներում նյութերի ընթերցումը պետք ե կատարվի վոլ միմիայն քերականական գիտելիքը յուրացնելու համար, այլև պետք ե ծառայի լեզվական ալլ կողմերի՝ բանավոր խոսքի, գրավոր խոսքի, կարդալու ուսուցման նպատակներին։

Դիտաժումների Յերբ յերկարատէ վարժությունների միջոցով ուսուցումը ուսուցչի համար պարզված ե, վոր գոյականի և բայցի յուրացումը կատարված ե լիսվին, այդ դեպքում դա-

սատում ուշադրություն ե հրավիրում յես, դուենա բառերի վրա. նրա մտադրությունն ե սովորեցնել դերանունները:

Ընդհանրապես դերանունների ըմբռնումը մյուս խոսքի մասերի համեմատությամբ շատ դժվար է: Լեզվի զարգացման ընթացքում 1-ին և 2-րդ դեմքի դերանուններն ամենաուշ առաջ յեկած խոսքի մասերից են: Դերանունների ուսուցումը կատարվում է հետևյալ կերպ:

Վարժություններով գաղափար ե տրվում դերանվան մասին, վորպես գոյական անվան փոխարինողի, թեև իրապես դերանունները փոխարինվում են նաև այլ խոսքի մասերի: Ամենահեշտը «նա» դերանվան գործածությունն է և հենց այստեղից ել պետք ե սկսել: «Երցվում ե, որինակ, հետևյալ տիպի նախադասություններ.

«Նուշիկը դաս ե սովորում: Նա ջանասեր աշակերտու՞շի յե՞»: «Շողիկը պարապում ե սենյակում: Նա գիր ե գրում» և այնչ Այստեղ շատ պարզ յերկում ե, վոր առաջին նախադասությունների մեջ գործող անձինք՝ նուշիկը և Շողիկն ելին, նույնը մնում է նաև յերկրորդ նախադասությունների մեջ. բայց անունների փոխարեն յերկրորդ նախադասությունների մեջ տրված ե «նա». բառը: Ահա այդ «նա» բառը յերրորդ դեմքի անձնական դերանունն է, այսինքն անունների փոխարինողն է:

Յերկրորդ դեմքի անունների կամ խոսակցի անվան փոխարինողը օրու բառն է, իսկ խոսողի անվան փոխարինողը՝ «Շողիկը» բառն է: Այս ըմբռնումից հետո պետք ե հիշել նաև զրանց Հոգնակինները՝ մենք, դուք, նրանք և մի շարք վարժություններով վերջացնել ուսուցումը: Լավ կլինի նաև կատարել առաջին դեմքը յերկրորդով, յերկրորդ դեմքը յերրորդով կամ առաջինով փոխարինելու վարժություններ: Դրա համար յերեխաներին շատ մատշելի նյութի, թեկուզ հենց նրանց ամենորյա կատարած գործերի շուրջը կառուցվում ե մի պատմվածք :

Որինակ՝ «Առավոտյան յես վեր եմ կենում», հագնվում եմ, սանրվում եմ, լվացվում եմ, նախաճաշում, վերցնում գրքերս և գնում դպրոց: Դպրոցում ընկերներիս հետ յես սովորում եմ, կարդում, գրում և պատմում, ապա վերադառնում տուն, ճաշից հետո յես գնում եմ պիոներական հավաքութիւն, մասնակցում եմ տուն, պատրաստում եմ դասերս, թեյ եմ խմում և քնում»:

Այդ նույն պատմվածքը յերկրորդ դեմքով կլինի. «Առավոտյան դու վեր ես կենում, հագնվում ես, լվացվում ես, սանրվում ես, թեյ ես խմում և գնում ես դպրոց» և այլն: Այդ դեպքում, վորպեսզի իմաստավորվի այդ վարժությունը մեկը պատմում է իր մասին և այնուշետև դիմում իր ընկերոջը և ասում նրա արածների մասին նույնությամբ: Մեկ ուրիշին հանձնարարվում է պատմել իր ընկերոջը (Կիմբիկի, Արամի և մյուսների) մասին նույն պատմությունը, առանց Կիմիկի բառը գործածելու: Որինակ՝ «Առավոտյան նա վեր ե կենում, հագնվում ե» և այլն:

Նախադասությունների ոպնությամբ, ճիշտ այնպես, ինչպես գոյականների հոլովումն եր ուսուցվում, պետք ե սովորեցնել և անձնական դերանունների (յես, դու, նա) հոլովումը: Ուսուցման վերջում պետք ե վարժություն կատարել տեքստի վրա, առաջարկել ընդգծել այս կամ այն հոլովի դերանունը, կամ արտագրել և վորոշել դերանվան հոլովը, կամ փոխել դերանվան հոլովը և այլն:

Համայնական Զորրորդ դասարանում հեշտ ե սովորեցնել նաև յեղանակի ուսուցումը հրամայական յեղանակը, քանի վոր հրամայական յեղանակը շատ ձևեր չունի: Մյուս կողմից ուսուցչի և աշակերտների հարաբերության մեջ այդ յեղանակը ամենագործածականն է: Պետք ե սովորեցնել, վոր մենք մի բան խնդրելիս կամ կարգադրելիս գործ ենք ածում առանձին ձև, վոր միայն մի դեմք ունի, յերկրորդ դեմք, բայց յերկու թիվ, որինակ՝ ուսուցիչը աշակերտին ասում ե. — «Կարդա՛, գրի՛ր, արի՛, գնա՛» և այլն: Այս ձեկրով ուսուցիչը կարգադրում է աշակերտին գործողություններ կատարելու: Այս գործողությունները կարգադրվում են կամ մեկին և կամ շատերին: Մեկին կարգադրելիս ստացվում ե յեղակի թիվ, որինակ՝ զնա՛, կարդա՛, խմիր՛, դի՛ր և այլն: Շատերին կարգադրելիս ստացվում ե հոգնակի թիվ՝ կարդացե՛ք, գրեցե՛ք, խմեցե՛ք և այլն: Աշակերտին սովորեցնում ենք հրամայականի դրական ձևը՝ «ցցե՛ք» և «ցցե՛ք» վերջավորությամբ: Գրե՛ք, նստե՛ք և այլ ձևերը բարեպառային ձևեր են և, թեև այժմյան գրական լեզվի մեջ տարածված են, բայց չեն որինականացված, ուստի պետք ե ուսուցվեն՝ կարդացե՛ք, գրեցե՛ք: Մի քանի բառեր կան, վորոնք «ցցե՛ք» ձևը չունեն, դրանք են՝ կերե՛ք, տարե՛ք, բերե՛ք և այլն, անկանոն բայեր և «ն» կամ «շ» ածանց ունեցող բայերը (տեսե՛ք, փախե՛ք, բայեր և «ն» կամ «շ» ածանց ունեցող բայերը (տեսե՛ք, փախե՛ք,

մտե՛ք, թուե՛ք և այլն), բայց այդ մասին վոքննշ չպետք է ասել աշակերտին տարրական դպրոցում:

Ցերբեքը չպետք է կարծել, վոր մի բնորոշումով, մի սահմանովվ հնարավոր կլինի վորսե կանոն սովորեցնել: Միայն դեպական վարժությունն է ապահովում կանոնի լիակատար յուրացումը: Սահմանումներն անհրաժեշտ են վարժ յուրացրած կանոնը հիշողության մեջ պահելու և ձևակերպելու համար: Այս տեսակետից պետք է կանոնը սկզբից ասել և ապա բացատրել ու վարժություններ կատարել, միշտ ուշադրություն հրավիրելով կանոնի արտահայտած միտքը հաստատելու վրա: Նման մեթոդը գործադրվում է այն դեպքում, եթեր սահմանումի մեջ հասկանալի և դյուրըմբըռնելի շատ տարրեր կան:

Ցերեմն պետք է նախ վարժություններ կատարել, բացատրել, ըմբռնել տալ կանոնը և ապա ձևակերպել այն, այդ ձևակերպումը կհանդիսանա ընդհանուր աշխատանքի ամփոփումը:

Քերականության ուսուցման մեջ գործադրելի յե՛ թե՛ այս, թե՛ այն յեղանակը, որինակ, գոյականների ուսուցման ժամանակ կարելի յե՛ սկսել սահմանումով, բայց նախադասության ուսուցման ժամանակ անհրաժեշտ է նախ բացատրել, ըմբռնել տալ նախադասության հիմնական հատկանիշները և ապա միայն սահմանել այն: Մենք կարծում ենք, վոր հոլովների ուսուցման ժամանակ ևս պետք է վարժություններից սկսել, բացատրություններից սկսել և վերջացնել սահմանումներով:

Սակայն դրանով չի վերջանում վողջ աշխատանքի պրոցեսը: Հետեւայում վարժությունների միջոցով հիշողության մեջ ամրացվում են թե՛ սովորած կանոնները և թե՛ սահմանումները:

Կապերի
ուսուցումը նախադասության մեջ հեշտ է ջոկել այնպիսի բառեր, վորոնք ունեն բովանդակալից և կոնկրետ իմաստ, արտահայտում են մի իր, մի գործողություն կամ մի հատկություն: Բայց կան նաև այնպիսի բառեր, վորոնք թանձրացյալ իմաստ չունեն, վորոնք չեն կապվում առարկայի հատկության, թվի գործողության, վորակի գաղափարների հետ:

Այս բառերը նախադասության մեջ կապելու դեր են կատարում, ուստի կոչվում են կապեր:

Քերականական կատեգորիաներից ամենադժվար ըմբռնելին հենց այդ կապերն են, վորոնք մարդու լեզվի զարգացման մեջ

ամենաուշ առաջացածներից են: Դրանք ավելի ուշ են առաջացնել քան դերանունները: Մեզ մոտ վոլ գրանության մեջ, վոլ ել մի այլ ձեռվ հետքեր չկան, թե յերբ են գոյացել դերանունները: Մասկայն բազմաթիվ փաստեր կան, վոր մեր «կապ»-երը գոյացել են այս վերջին հազարամյակում: Նույնիսկ այսոր, ժամանակակից հայերենի մեջ, կան բառեր-կապեր, կապական բառեր, անհսկական կապեր; վորոնք գեռ վերջնականապես չեն ձևակերպվել վորպես կապ: Նրանք գործ են ածվում նաև վորպես գոյական կամ ածական, թեև իրենց հիմնական վորակով արդեն կապեր են: Որիշ նաև՝ «ինձ մոտ» կապակցության մեջ մոտ բառը կապ է: Բայց «իմ մոտով» կապակցության մեջ մոտ բառը գոյական անուն եւ նույնը և «ինձ վրա» կամ «իմ վրա» և «իմ վրայով», «իմ վրայից» և այլն: Այս իսկ պատճառով կապերի ուսուցումը բավական դժվար է: Դրա համար անհրաժեշտ է վերցնել առաջին վարժությունների հիմնական պահիսի կապեր, վորոնք իրենց թանձրացյալ իմաստը կորցրել են և մնում են վորպես հիմնականում շարադրուական իմաստ ունեցողներ: Դրանցից են՝ «ամ ար, շնորհի մեմատ, համաձայն, դեպի, առ մեմատ, համաձայն, դեպի, առ անց, մինչեւ, մասին, և այլն»:

Այդ կապերից մի քանիսը գրվում են բառերից առաջ, իսկ մի քանիսը հետո և հիմնականում կապում են ստորովյալը իր լրացումների հետ, ավելի ճիշտ՝ բայց (անկախ նրա պաշտոնից): այլ խոսքի մասեր հանդիսացող բառերի հետ: Որինակ՝ «Գրիգորի համար գրած վկայականը» կապակցության մեջ համար բառը կապում է Գրիգոր բառը գրած բայի հետ: Ցերեք հնարավոր շեամել՝ «Գրիգորի համար նամակը» այսինքն՝ գոյականի հետ: Վարժությունների արդյունքը պետք է լինի այն, վոր աշակերտները նկատեն, թե կան կապեր, վորոնք գործ են ածվում միշտ բառերից առաջ: Անշաղրություն հրավիրելով այդ հանգամանքին վրա, պետք է ասել, վոր դրանք կոչվում են նախադրություններ, այսինքն առաջից դրվածներ: Հայերենում այդպիսիները քիչ են. ընդամենը մի 4—5 հատ՝ առանց,՝ մինչեւ, դեպի, բացի:

Վարժությունների միջոցով պետք է ցուց տալ կապերի այն խումբը, վոր դրվում է բառերից հետո: Այդպիսի կապերը պետք է կոչիլ և առ դրու թիվուն եր: Այս վերջինից հայերենում շատ կան, և ընդհանրապես ժամանակակից հայերենի բնովականութեամբ

արրում ե հետադրություններ, մինչդեռ գրաբարը վոլ մի հետադրություն չունի:

Կան նաև այնպիսի կապեր վորոնք կարող են դրվել բառից թե՛ առաջ, թե՛ հետո: Այսպես, որինակ, շնորհիվ կ համաձայն կապերը: Որինակ՝ Շնորհիվ Գրիգորի կամ Գրիգորի շնորհիվ (լավ ՚ ե վերջինը): Համաձայն քո խոսքի կամ՝ քո խոսքի համաձայն (լավ ՚ ե վերջինը):

Կապերի ճանաշումը անհրաժեշտ ե նաև այն պատճառով, վոր նրանք միայնակ նախադասության անդամ չեն դառնում, այլ ուրիշ բառերի հետ միասին կազմում են նախադասության անդամ (լրացում):

Շաղկապ: Խնչպես տեսանք, կապերը կապում են բայց մեր ուսում: Մյուս խոսքի մասերի հետ, շաղկապները, սակայն, կապում են բոլոր խոսքի մասերը միմյանց հետ համադաս կապացությամբ: Սովորաբար հայերենում իրը շաղկապ հեղտությամբ ճանաշում են «և», ուստի և «կամ» բառերը: Խնչպես վոր այս յերեքը շատ հեշտ ե ըմբռնել. այդ ումակությունը յերեխաները ձեռք են բերում բանավոր լեզվի մեջ դեռ մանկական հասակից: Այս յերեք շաղկապները սովորեցնելու առանձին դժվարություն չկա:

Բավական ե ասել, վոր «և», ուստի և «կամ» բառերը շաղկապ նն, շաղկապում են բառեր և նախադասություններ և մի շաղկաբժյուններով այդ հասկացողությունն ամրացնել: Պետք ե վերցնել շատ կոնկրետ որինակներ՝ «Արամը և Գևորգը գնացին տուն»: Ճնա կարդաց և գործ», ճնատելու կանգնել» և այլն: Բայց շաղկապների ուսուցումը դրանով չի վերջանում: Յերեխաները բանավոր խոսքի մեջ համեմատաբար ավելի քիչ շաղկապ են գործածում: Ստորադասական շաղկապներից տարածված են «վորվհետև» և «վոր» շաղկապները: Միայն մշակված գրական լեզվի մեջ գործածական են՝ «մանավանդ», «թեև», «քանի վոր» և այլն: Ուստի շաղկապներ սովորեցնել՝ դա նշանակում ե նաև խոսքի ունակությունը զարգացնել:

Իրեւ որինակ վերցրած նախադասությունը պետք ե լինի այնպիսին, վոր նրա մեջ շաղկապը բռնազրուիկ կերպով գործածված լինի: Դրա համար անհրաժեշտ ե հարցերը տալ այնպիսի ձեռնվազ վոր աշակերտները պատասխանի մեջ գործածեն զանազան շաղկապներ: Հաճախ մի շաղկապ գործածվում ե մեկ ու-

թիշի փոխարեն. որինակ՝ «վոր» շաղկապը հաճախ գործ ե ածվում «վորպեսպի», «յեթե» շաղկապների փոխարեն. որինակ՝ «վոր հարցնես՝ կասեմ»— փոխարեն՝ «Յեթե հարցնես կասեմ»:

«Դանդաղ են կարդում, վոր լավ հասկանաս»— փոխարեն՝ սելու՝ «Դանդաղ եմ կարդում, վորպեսպի լավ հասկանաս»:

Շաղկապների ուսուցման ընթացքում պետք ե ճշտել յուրաքանչյուրի գործածությունը և իմաստը, ինչպես և մեկ շաղկապը մյուսով փոխարինելու կարելիությունը և վարժությունների միջնով արմատավորել աշակերտի խոսքի մեջ:

5. ԲԱՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Տարրական դպրոցի 3-րդ և 4-րդ դասարանների ծրագրի մեջ մտնում ե բառակազմության ուսուցումը, վորը պետք ե սկսել պարզ և բարդ բառերի ուսուցումով:

Պարզ բառերի ուսուցումն ավելի դժվար ե, քան բարդ բառերի, քանի վոր պարզ բառերի սահմանում տալը. 3-րդ դասարանում մատչելի չե, պիտի միայն ասել, վոր սեղան, աթոռ, տետր և այլն բառերը պարզ են: Այդ բառերից կարելի յե կազմել բարդ բառեր, որինակ՝ «սեղան» բառին միացնում ենք «ստոմ» բառը և դրանց մեջ զնում «ա» ստացվում ե սեղանատում, մի բոլորովին նոր առարկայի անուն, «ժամ» և «ցուցյ» բառերը միացնելով ստացվում ե ժամացուցյ, «լուս» և «մուտ» բառերից ստացվում ե լուսամուտ և այլն:

Հարմար ե սկզբում վորպես որինակ վերցնել կոնկրետ առարկա շուց տվող բառեր, վորոնք հնչյունափոխության շեն յենթարկվում և անպայման «ա» հոդակապ ունեն: Աշակերտների ուշադրությունը պետք ե հրավիրել այն հանգամանքի վրա, վոր յերկու բառերը միացվում են «ա» ձայնավորով, վոր կոչվում ե հոդակապ: Դրանից հետո պետք ե առաջարկել իրենց՝ աշակերտներին կազմել բարդ բառեր: Այդ վարժությունը պետք ե կատարել զգուշությամբ, վորպեսպի անմիտ բավարություններ լկազմվեն: Մյուս կողմից բարդ բառերը կազմելու ունակությունը կարևոր ե լեզվին տիրապետելու համար:

Չորրորդ դասարանի ծրագրում բարդ բառի մասին նույնպես վորոշ բան կա, հատկապես այն ձեկի մասին, յերբ բարդության առաջին բառը բազմավանկ ե և վերջավորվում ե սիւով՝ որինակ՝

գինի, վոսկի, և այլ բառերը: Մեզ հայտնի յէ, վոր սրանց բարդությունը կատարվում է «ե» ձայնավորի ոգնությամբ,— վորն առաջ և գալիս «ի ա» կապակցությունից: որինակ՝ գինիատուն գրփում ե՝ գինիտուն, վոսկիագույն գրփում ե՝ վոսկիգույն և այլն: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այդ ձեւի բարդությունների վրա և որինակներով աշակերտներին սովորեցնել այս ձեւի բարդություններ կազմելու: Որինակները պետք է նախորոք մշակել և թելադրել՝ հանձնարարելով աշակերտներին գոնել այս ձեւի բառեր՝ որինակ՝ գարի-ջուր՝ գարեջուր, տարի-դարձ տարեդարձ, բարդության կապակցությամբ պետք է սովորեցնել բառի կազմությունն ընդհանրապես: Անհրաժեշտ է ցույց տալ, վոր բարդության մեջ բառերը մտնում են թե՛ իրենց անփոփոխ, անաճական մասով և թե՛ բաղադրված ձեռվէ: Դրա համար անհրաժեշտ է վերցնել բառը և նրա զանազան ձեռքը գրել իրար տակ. որինակ՝

տեսնել,
տեսնող,
տեսք,
տեսարան,
տեսություն,
տեսակետ, և այլն:

Այդ բոլոր բառերի մեջ նկատվում է մի անփոփոխ մաս, վոր բոլորի մեջ ել կա. այս՝ «տես» մասն է: Ահա այս մասը կոչվում է բառի արմատը: Այս նույն որինակով պետք է վերցնել միևնույն արմատ ունեցող մի շարք բառեր և այնտեղ ևս պարզել բառի արմատը: Այդ վարժությունը պետք է կատարել մի քիչ յերկար ժամանակով, պետք է սկսել այս ձեռվէ. որինակ՝ գրատարակությունը պետք է կատարել մի գրատարակությունը և այս մասը բառերի մեջ նույն բառերի մեջ նույն բառերը կապված է առաջին գործությունը: Բայց գիր բառն ունի մի շարք ածանցված ձեռք, իսկ տախտակ բառն ունի տախտակամած, տախտակյա և այլ ձեռքը: Այդ ձեռքից տեսնում ենք, վոր բարդության մեջ մտնում են վոլ միայն արմատական ձեռքը: Դրանով պարզում ենք վերջնականապես բառերի բարդության հիմնական կանոնը: Այդ որինակները ցույց են տալիս նաև այն, վոր բառը կազմված է յերկու մասից, մեկը՝ արմատական մասն և, վոր միջատ պետք է լինի բառի մեջ՝ նրան հիմնական

իմաստ տալու համար, որինակ՝ տես, իսկ մյուս մասը՝ յոթյան շուրջուր դեպքում տարբեր ե, որինակ՝ տեսնել, տես-ություն («նել», «ք», «ություն»): Բառի այս մասերը տակա արմատին յուրաքանչյուր դեպքում նոր իմաստ են տալիս, վորակապես փոխում են բառի նշանակությունը: «Տես» արմատը ցույց է տալիս թե այդ նոր իմաստներն ինչ ընդհանուր աղբյուր ունեն, դրանով մի ընդհանուր ըմբռնումը ձեղքվում է, բաժանվում է նոր մասերի, վորոնցից յուրաքանչյուրը նոր ըմբռնում և դառնում: Այն մասնիկը, վորը բառին նոր իմաստ է տալիս (վորակապես փոխում այն), թե՛ ըստ իմաստի և թե՛ յերբեմն ըստ կատեգորիայի), կուվում է ածանց, ամբողջ բառը կոչվում է ածանցավոր: Պետք է առաջարկել, վոր աշակերտները հավաքեն ածանցավոր բառերը և աղյուսակ կազմեն; կամ պետք է մի ածանց ասել և առաջարկել հավաքել այդ ածանցով յեղած բառերը:

Կարելի յէ նաև մի արմատ ասել և առաջարկել ածանցել ու յուրաքանչյուր դեպքում բացատրել ածանցված բառի իմաստը: Այս վարժություններն ամբացնում են ածանցավոր բառերի, ինչպես և արմատի ըմբռնումը: Կարդացած հոգմածում և կամ դասարանական նյութ հանդիսացող պատմվածքում աշակերտները վորոնում են և դուրս գրում ածանցավոր բառերը: Այստեղ ևս ուսուցչի համար պարզ կլինի, թե վորքան են յուրացրել աշակերտները բառի ըմբռնումը այն քանակով, վորը դուրս կգրեն աշակերտները: Ածանցավոր բառերի ըմբռնումը խորացնելու համար պետք է ավելացնել, թե ածանցները լինում են բառասկզբում գրված կամ բառավերջում գրված և կամ՝ և՛ սկզբում և՛ վերջում: Առաջին դեպքում ածանցները կոչվիմ են ն ա խ ա ծ ա ն ց, վորոնցից մեկ յերկուար պետք է հիշատակել, հատկապես հայերենում տարածված ան, արդ, յենթ, համ ածանցները, իսկ բառավերջում գրվածները կոչվում են վերջ ածանց ց, վորոնցից են ոց (դարձնոց), արան (նստարան), եղին (ամանեղին), ային (արծիային), ական (պիոներական) և այլն: Կարելի յէ աշակերտներին հանձնարարել գոտնելու հայերենում յեղած ածանցները, վորքան հնարավոր և շատ քանակությամբ: Յուրաքանչյուր աշակերտ կաշխատի ավելին գոտնել և սա առիթ կտա նրանց բառակազմությունը սովորելու: Հայերենում 100-ից ավելի ածանցներ կան, բայց աշակերտները կկարողանան գոտնել միայն 20—30 հատ:

Մի ուրիշ հանգամանքի վրա ևս պետք է ուշադրություն

դարձնել, այդ այն եւ, վոր ածանցավոր բառը ևս ածանցվում եւ: Այդ դեպքում ինքը ածանցավոր բառը գիտակցվում է վորպես արմատական բառ և դրա հետեւանքով յերբեմն հայերենում ստացվում է չորս-հինգ ածանցով բառ: Յերբ նոր է ուսուցվում ածանցը, լավ է վերցնել սկզբից կամ վերջից մի ածանց ունեցող բառ, իսկ յերբ կտովորեն ածանցը ճանաչել, այդ դեպքում պետք է սկսել բազմածանցները սովորեցնել: Այդ վարժությունը նույն շափով պետք է կատարել, վորչափ և մյուս դեպքերում: Առանձնապես հետաքրքրություն կառաջանա այն դեպքում, յերբ իրենք աշակերտները վորոնեն և գտնեն ածանցավոր բառեր ու ջոկեն նրա միջի արմատները և ածանցները:

Արմատը և ածանցը սովորեցնելիս պետք է վերցնել այնպիսի դեպքեր, յերբ արմատը ածանցման ու բարդության մեջ հընկումափոխություն չի կրում: Արմատի և ածանցի մասին պարզ գաղափար կազմելուց հետո պետք է նաև հնչունափոխություն կրող արմատներն ել վերցնել, վորպեսզի դրանից անմիջապես հետո հնարավոր լինի սովորեցնել հնչունափոխությունը. որինակ՝

զիրք>զիր-ք

զրել>զր-ել

զրող>զր-ող

զրություն>զր-ություն

զրիշ>զր-իշ

վերցն 5 բառերի մեջ զիր բառը հնչունափոխության և յենթարկված և ստացվել ե «զր»:

Ածանցավոր բառերի յուրացումը ավելի խորացնելու համար անհրաժեշտ ե ցույց տալ, վոր ածանցները վոլ միայն փոխում են բառի իմաստը, այլև բառի կատեգորիան: Ուրիշ կերպ ասած՝ կան հատուկ ածանցներ, վորոնք ավելանալով արմատի վրա կամ արդեն ածանցված բառի վրա, դարձնում են նրան գոյական, ածական և այլն: Գոյականացնելու համար կան հատուկ ածանցներ, ինչպիսին են՝ ություն (լավություն), ույր (յերևութ), որդ (ճանապարհորդ) և այլն: Ածականացնող ածանցներն են՝ ային (զրային), ական (սուսական), եղեն (վոսկեղեն), յա (փայտյա) և այլն: Դասական թվականների համար գործածվում է երորդ ածանցը (հինգերորդ) և այլն, բայերի համար՝ ալ (կարտալ), կամ ել (գրել), մակբայների համար՝ արար (բարեկամաբար), որեն (լայնորեն) և այլն:

Վերևում ասացինք, վոր պետք է վերցնել նաև ածանցավոր բառերի այնպիսի դեպքեր, յերբ արմատը բառակազմության ժամանակ փոխվում է. որինակ՝ զիր, վորից կազմվում է գրատախտակ, գրադարան և այլն, տուն, վորից կազմվում է տնակ, տրն-վոր և այլն, հրավեր, վորից ստացվում է հրավիրել և այլն:

Ուշադրություն հրավիրելով այս որինակների արմատների վրա, պետք է դուրս բերել այն յեզրակացությունը, վոր բառակազմության մեջ, ինչպես և բառի թեքված ձևերում (հոլովում, խոնարհում), բառի արմատական ձայնավորը փոխարինվում է մեկ ուղիղով, կամ դուրս ընկնում: Զայնավորի այդ դեպքը կոչվում է հնչունափոխություն:

Յուրաքանչյուր բաժնի ուսուցումից հետո պետք է կատարել նախադասությունների վերլուծությունը ըստ նախադասության անդամների և ըստ խոսքի մասերի: Նույն նախադասություններից պետք է բառակազմական վերլուծության յենթարկել այն բառերը, վորոնք մատչելի յեն աշակերտներին ըստ անցած ծրագրի: Ստորև բերում ենք վերլուծության նմուշներ:

1. ՀԱՅԿՆ ՈՒ ՇՈՂԻԿԸ ԳՆԱՑԻՆ ՄՈՏԻԿ ԳՅՈՒՂԸ ԳԻՐՔ ԳՆԵԼՈՒ

Վերլուծություն ըստ խոսքի մասերի

Հայկն— Հատուկ գոյական անոն, ուղղական հոլով:

Ու— շաղկապ:

Շողիկը— հատուկ գոյական անոն, ուղղական հոլով:

Դնացին— անցյալ ժամանակի բայ, հոգնակի յերրորդ դեմքի:

Մոտիկ— ածական անոն:

Գյուղ— հասարակ գոյական անոն, հայցական հոլով:

Գիրք— հասարակ գոյական անոն, հայցական հոլով:

Դնելու— բայ:

2. ԱՐԾԻՎԸ ԿԱՆԳՆԵՑ ՍԵՎ ԺԱՅՈՒ ԳԼԽԻՆ

I. Վերլուծություն ըստ նախադասության անդամների

Արծիվը— յենթակա:

Կանգնեց— ստորոգյալ:

Սև ժայուի գլխին (կանգնեց)— ստորոգյալի լրացում:

6890

II. Վերլուծություն բառ խոսքի մասերի

Արծիվը — հասարակ գոյական անուն ուղղական հոլով։

Կանգնեց— անցյալ ժամանակի բայց, յեզակի յերրորդ դեմք:
Սկ— ածական անում:

Ժայռի — Հասարակ գոյական անուն, սեռական հոլով; Գլխին — Հասարակ գոյական անուն, տրական հոլով;

Նույն վերլուծությունները կարելի յե կատարել նաև հարցերը դրելով:

Գիւմար Անոնց առ Հայոցներին

վայրէն ասլուց մասն աշխարհ քառակ է միա բարձրաց է

վայս առջպատ մենք չախուր կառած - զիլոն

Պատ. Խմբագիր՝ Ա. ՄԱԼԻԱՍՅԱՆ

ՏԵՂ. ԽՄՐՊԳԻԲ' 2. ԱՅՎԱԶՅԱՆ

Արքագրիչ՝ Ս. ՇԱՀԲՈՋԱՆ

«Ազգային գրադարան»



NL0249252